ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/75

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝
«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ն. Մանուկյանի

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9261-2019 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 31.05.2019թ. թիվ Ե/40/1276-19 գրության հիման վրա, 04.06.2019թ. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 31.05.2019թ. թիվ Ե/40/1276-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից պաշտպանիչ միջոցների ձեռք բերման նպատակով հրապարակվել է ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18 ծածկագրով գնման ընթացակարգը, որին մասնակցության հայտ է ներկայացրել «Տիգման Գրուպ» ՍՊԸ: Գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. թիվ 2.1 որոշմամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ 19-րդ չափաբաժնի համար ճանաչվել 1 առաջին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկվել է եռօրյա ժամկետում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը: Գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. թիվ 3 որոշմամբ հանձնաժողովը արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ հրավերին «Տիգման Գրուպ» ՍՊԸ որակավորումն հիմնավորող փաստաթղթերում, մասնավորապես՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ ներկայացրած պայմանագիրը չի կարող համարվել նմանատիպ, քանի որ տվյալ պայմանագրով չեն մատակարարվել թիվ 19 չափաբաժնի ԳՄԱ կոդի խմբում CPV 18400000 խմբում գտնվող ապրանքներ, ինչպես նաև չի ներկայացվել տվյալ պայմանագրի հաշիվ ապրանքագրերը:

Գնահատող հանձնաժողովի 25.06.2018թ. թիվ 3 որոշմամբ առաջարկվել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ շտկել որակավորումն հիմնավորող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 10.07.2018թ. թիվ 3.1 որոշմամբ հանձնաժողովը արձանագրել է, որ ահմանված ժամկետում «Տիգման Գրուպ» ՍՊԸ չի ներկայացրել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը և անբավարար է գնահատել «Տիգման Գրուպ» ՍՊԸ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի

կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Տիգման Գրուպ» ՍՊԸ կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

3. <u>«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.06.2019թ.-ին գրությամբ դիմել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9261-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, Բողոքներ քննող անձին 25.06.2019թ. ներկայացված գրությամբ հայտնել է, որ.

«Մեր կազմակերպությունը մասնակցել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման բաց մրցույթի N 19 չաափաբաժնին՝ համապատասխան հայտ և գնային առաջարկ ներկայացնելով 28.05.2018թ.:

Հրապարակված հրավերի «Գնման առարկայի բնութագրում» (էջ 6) և «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում» (էջ 39) բացակայում է գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (ՇԲ\վ: Միայն այս միջադեպից հետո ենք հայտնաբերել, որ այն առկա է միայն «վճարման ժամանակացույցում» (էջ 45):

Հրավերի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի սահմանման և գնահատման կարգի մեջ (էջ 10)՝ մասնավորապես N 19 չափաբաժնի համար նշված է , որ

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարկա ընթացքում պատշաճ ձեով իրականացրած փնի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանուգիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տկյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ

պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից (թիվ 9, 11, 13, 14, 15, 16, 17, 19, 26, 27, 28 չափաբաժինների համար):

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում մասնագիտական հագուստի, վերնահագուստի, հատուկ արտահագուստի և վերնահագուստի և պարագաների, անձնական խնամքի պարագաների, կոշկեղենի, անհատական և օժանդակ սարքերի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: (թիվ 9, 11, 13, 14, 15, 16, 17, 19, 26, 27, 28 չափաբաժինների համար):

N 19 չափաբաժնի համար մեր ներկայացրած գինը կազմել է 3424650 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), իսկ երկրորդ տեղ հայտարարված մասնակից «Մեյդ թու Մեյք» ընկերության գնային առաջարկը եղել է 3873112 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), չնայած 04,06,2018թ. N2 արձանագրությամբ տեղեկացել ենք,որ այդ չաւիաբաժնի նախահաշվային գինը ուռճացված է կազմում է 6115440 ՀՀ դրամ և չի համապատասխանում տվյալ ապրանքատեսակի շուկայական արժեքին:

Ստանալով պատվիրատուից համապատասխան ծանուցում, 11.06.2018թ. սահմանված կարգով ներկայացրել ենք առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 6 և հավելված 6.1)՝ կցելով նախկինում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրի պատճենը և դրա պատշաճ կատարման հավաստումը: Որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացրել ենք պահանջվող «անձնական խնամքի պարագաներ» մատակարարված պայմանագրի պատճենը՝ հիմք ընդունելով 33700000 CPV կոդի խմբում ներառված ապրանքների տեսակները (կից ցանկ):

Այնուհետև՝ 19.07.2019թ. N 3.2 արձանագրությամբ տեղեկացել ենք, որ չնայած ճանաչվել ենք N 19 չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն ընտրված մասնակից է ճանաչվել «Մեյդ թու Մեյք» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը եղել է 448462 ՀՀ դրամով ավելի, քան մերն է:

Տեղ գտած թյուրիմացությունը պարզելու նպատակով հեռախոսակապ ենք հաստատել պատվիրատուի հետ և տեղեկացել ենք, որ մեր կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա մատակարարված ապրանքների տեսակները չեն համապատասխանել հրավերով պահանջված չափանիշներին և այդ պատճառով այն համարվել է անբավարար, և իբրև մեզ ուղարկվել է համապատասխան արձանագրություն և տրվել է մեզ այն շտկելու հնարավորություն, որը մենք չենք կատարել:

Մեր բազմաթիվ բանավեճերի արդյունքում պատվիրատուն այդպես էլ մեզ հնարավորություն չի ընձեռնել այն շտկելու, և որոշումը թողնելով անփոփոխ՝ պայմանագիր է կնքել մյուս մասնակցի հետ (չնայած այն հանգամանքին, որ բյուջեից վճարվելու է հավելյալ 448462 ՀՀ դրամ՝ տվալ ապրանքի ձեռքբերման համար):

Արդյունքում մեր ընկերությունը հայտնվել է մեզ համար անցանկալի իրավիճակում:

Մեր ընկերությունը բացառապես իրականացնում է գնումների գործընթացներում կնքված պայմանագրերի շրջանակներում ապրանքների ներմուծման և մատակարարման գործառույթներ:

Հաշվի առնելով վերը նշածը և այն հանգամանքը, որ մեր գործողություններում բացակայում է չարամտորեն կեղծ տվյալներ ներկայացնելու փաստը՝ հայցում եմ Ձեր ներողամտությունը և խնդրում չներառել «Տիգման Գրուպ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

4. <u>ՍՑ-LO-2019/75 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների՝ Ընթացակարգին մասնակցության հայտ է ներակայացրել նաև «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 19-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովի 06.06.2019թ. նիստի թիվ 2.1 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքների նմուշները:

Գնահատող հանձնաժողովի 25.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագիրը չի կաող համարվել նմանատիպ, քանի որ տվյալ պայմանագրով չեն մատակարարվել թիվ 19 չափաբաժնի ԳՄԱ կոդի խմբում CPV 18400000 գտնվող ապրանքներ, ինչպես նաև չի ներկայացվել տվյալ պայմանագրի հաշիվ ապրանքագրերը:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 47-րդ կետով, որոշել է նիստը կասեցնել և առաջարկել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 26.06.2018թ. թիվ 3 արձանագրությունը ուղարկվել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին և առաջարկել է Մասնակցին շտկել առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շկտվել արձանագրված անհամապատասխանությունները:

5. **<u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>**.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9261-2019 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի

գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով

սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի

ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը

գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից պաշտպանիչ միջոցների ձեռքբերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 19-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որպես նմանատիպ ներկայացված պայմանագրի հաշիվ ապրանքագրերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. 526-Ն որոշման 47-րդ կետով, որոշել է նիստը կասեցնել և առաջարկել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին շտկել առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 26.06.2018թ. թիվ 3 արձանագրությունը ուղարկվել է «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին և առաջարկել է Մասնակցին շտկել առկա անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովի 10.07.2019թ. նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում չի շկտվել արձանագրված անհամապատասխանությունները:

«Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-4/18» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.06.2019թ. թիվ 26/26-1/9261-2019 գրությամբ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**